



ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱԿՆՈՒՄ

Հոգևոր մբերի 12-ին, շաբաթ օր, հետ սուրբ պատարագի, հետմիջօրեի ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական հանդես, նվիրված մեր սուրբ թարգմանիչ վարդապետների՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Եղիշի Եղիշ, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի լինսության, Գրիգոր Նարեկացու և Ներսիս Շնորհակալու անթառամ հիշատակին:

Հանդիսության նախագահում էր Հոգևոր Ճեմարանի նորընտիր վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Արքահամայնքը: Հանդեսին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և ամբողջ ուսանողությունը:

Արբոր թարգմանչաց վարդապետների հիշատակին, նվիրված հանդեսը բացվեց Շնորհ զարդարեցին տնօրինաբար շարականուվ, որը երգվեց երգախմբի կողմից: Ա լսարանի ուսանող բարեշնորհ ծիրայր սարկավագ ճերենյանը խորունկ ապրումով արտասանեց Սիամանթոյի Ս. Մեսրոպից «Դյուտին փառքը» հատվածը:

Ապա Հոգևոր Ճեմարանի դասախոս պարուն Արքուն Հատիւյանը հանդես եկավ սուրբ թարգմանիչ վարդապետների հիշատակին նվիրված բացման խոսքով:

Ա լսարանի ուսանող բարեշնորհ Հակոբ սարկավագ ճենեղյանը փայլուն հա-

շողովթյամբ արտասանեց Վ. Թեքեյանի «Տաղ գրաբարին» քերթվածը:

Օրվա գլխավոր բանախոսն էր հեռավոր Արքելքի Հայրապետական պատվիրակ և նրանականի Մրատց Հակոբյանց միաբանության շնորհալի ամողամներից հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրափուլյան վարդապետ Ղազարյանը, որին պարոն Արթուր Հատիւյանը ներկայացրեց ուսանողության չերմ խոսքերով և հրավիրեց բանախոսության:

Հոգեշնորհ Տ. Ասողիկ ծայրափուլյան վարդապետ Ղազարյանը կարդաց գեղեցիկ ու բովանդակալից մի ճառ՝ նվիրված սուրբ թարգմանիչ վարդապետների կյանքին ու գործունեությանը.

«Մեր ազգային պատմության ամենեն ճակատագրական և բնորոշ հանգրանց կհանդիսանա թարգմանիշներով սկսող գրական այն գործունեության շրջանը, որ սկիզբ կառնե 425-ական թվականներուն և կշարունակվի առավել կամ նվազ խանդախառությամբ և բերմնամատոր արգասիճներով, հաշորդող բոլոր դարաշրջաններուն ընթացքին:

Քրիստոնեությունը նոր լույս և նոր գիտակցություն բերած էր հայ ժողովրդին, բայց ան դեռ բույրուվին արմատացած չեր զորավոր կերպով հայ ժողովրդի հոգվույն խորը, վասնզի քրիստոնեության քարոզը տարբեր լեզուներով և հաճախ օտար քառազիշներու միջոցով տեղի կունենար, ինչ որ

դժվարը մբռնելի էր հայ զանգվածներուն համար:

Ե դարում կորսնցուցած էինք մեր քաղաքական անկախությունը, բայց գտնվեցան մարդիկ, որոնք զգացին մեր ազգին հոգեոր, ժշակության կարիքները և ուղեցին անոր տպակ նոր միջոց մը ինքնապաշտպանության, նոր զենք մը՝ ինքինքը կարենալ պահելու համար, իր վրա խուժող ավազակ ուժերու դեմ:

Այդ մարդիկը կկոչվին մեր թարգամանիշները, որոնք մեր ազգին տվին գիր, գրականություն և ինքնագիտակցություն:

Մեր թարգմանիշ վարդապետները, որոնց հիշատակը կտոնե և լապայծառացնե մեր ծեղեցին ամեն տարի, եղած են մեր Ազգին իրական լուսավորիչները, բացած են մեր աշխերը գիտության լուսին, կրթության և ուսման բարիքներուն և մեղի պատվավոր տեղ մը տված են քաղաքակիրթ ազգերու շարքին մեջ: Ծակատագրական և փրկարար եղած է թարգմանիշ վարդապետներու գերը մեր պատմության ամենեն մով և ամենի շոշաններուն: Այդ բոլոր նրանցուաներին և ամեն կարգի մահացուաներին վերջ մենք կրցած ենք ոտքի կանգնիլ ու դարմանել մեր վերքերը, շնորհիվ մեր ազգային գիտակցության և այն անմեռու ուժին, որ կուգա մեր թարգմանիշ վարդապետներին:

Մեր թարգմանիշ վարդապետները, վասոված ազգային սիրով ու հոգեկան շերմ հավատքով, նվիրվեցան հոգեոր ու վազափառական կյանքի, լուսին ու գիտության մեյմեկ շահեր եղան, լուսավորեցին հայ ժողովուրդը Հայաստանի մեկ ծայրեն մյուսը, ծավալեցին աստվածդիտուության լուսը հայ սրաերուն մեջ, ինչպես նաև ճշմարիտ հայրենասիրության կրակը վառեցին հայ սրտերուն խորը: Մեր պատմության ամենեն մուայլ շրջաներուն մեջ անոնք հայ արտերուն մուայլ շրջաններուն մեջ անոնք հայ արտերուն մեջ ներարկեցին հերոսության ու հավատքի անպարտելի ոտքին, զանոնք հրազդեկով դարերու դեմ անմահության ուսկի եռանդներով ու տեսիլքներով լեզնելով զանոնք: Հայ ժողովուրդը մնաց հավատարիմ թարգմանիշներու ոգիին և գաղափարին: Թարգմանիշներու վառակը մեր միակը մնաց անմար, ուսման ու մուայլ դարերու մեջնեն ոչ մեկ աշխարհասասան փոթորիկ կրցավ հանգսնել զամ, թեև երբեմն նվազկոտ, սակայն միշտ մնաց մոխիքներու տակ անթեղված, ու ժամանակ առամանակ քոնկեցավ, իր կենսատու լուսն ու շերմությունը ափուց ու տարածեց հայ հոգիներին ներս:

Հայ ժողովորդի լուսաբաղ հոգին միշտ թրթուացեր է լուսին համար ու մնացեր է կառշած մագաղաթներին ու գրքերին ճառա-

գայթող իմաստության, «Ճանաչել զիմաստութիւն և զիրատ...», և որոնք պատմության մով ու ցուրտ գիշերները տաքցուցած ու լուսավորած են իր հոգին:

Մեր թարգմանիշ վարդապետները հայ ժողովորդի կյանքին մեջ կատարեցին նախախնամական դեր և զայն դարձուցին պիտության ու մշակույթի ժողովուրդ մը, ու քաղաքական տարրեր պայմաններու մեջ բաժան-բաժան ապրու հայ զանգվածները միացուցին գրի ու գրականության ուսկեացներով:

Ահա անոնցմե՛ թարգմանիշներն՝ առաջինը Ս. Մեսրոպ, որ խոր կերպով զգաց Ազգին կարիքները և մեկ կողմէ նետեց զինվորական իր տառատոկը և մոնազի համեստ սեբմը վրան առավ ու եղավ վանական, ու դարձավ մտքերու լուսավորիշ և հայության առաջին տառապիչ:

Ս. Մեսրոպ Հայաստանի երկու մասերուն մեջ ալ մկան տարածել գրին ու գրականության հրաշագործ լուսը, որ խարիսխը պիտի ըզար նաև ապագա սեբմնդի գոյության և մարտնչուաներուն, արևելքնեն ու արևմուտքնեն, հյուսիսն ու հարավին ներս խուփող բոլոր վտանգներուն դեմ:

Ս. Մեսրոպ Մաշտոցը պարագուպն էր թարգմանչական շարժման, գերազանցեալ քան զամենայն, տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւր պայծառ, գործով ժողովակալ, մարմնով արտափայեալ, խորհրդագութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծատր, ուսուցաներով անձանձրյութ, — կըսե Խորենացին: Ս. Մեսրոպը Օշականի իր համեստ դամբարաննեն մեղի կողեշնչե ու կոտրեցնե իր զմայբեկի Ա. Գ. ին հավիտենական ստաները և կհսկե հայ ժողովորդի ճակատագրին վրա:

Ահա և եղիշեն, Ավարաբի դյուցազներգ բանաստեղծը, որ իր հավատքով ու արյունով թաթավուն ոսկի գրիշով կերպի Վարդանանց հերոսամարտը: Դարեր շարունակ հայ ժողովորդի հոփլույն խորը կենդանի շունչով մը օծուն կապրին Վարդանանք, Եղիշեով հավերժացած:

Մովսես Խորենացին թարգմանիշներու հույնին մեջ ուրիշ լուսավոր դեմք մըն է, իսրեն քերթող և պատմաֆան, Ան մեր առաջին պատմահայրն է, որ Հայկ Նահանգետի օրերեն կպատմե մեր նախնյաց սիրագործությունները, զանոնք կփոփանց ներութեներուն, որ հայ ապրին և հայ մեսնին, Խորենացին անմահ կմնա հայ ժողովորդի հետ իր պատմությունովք:

Ալսորվան տոնակից սուրբերուն յորորորդն է Դավիթ Անհաղթ գրիկոսովիան, ներկա-

յացուցիչը իմաստասիրական գիտության կաճապին, որ փայլեցավ իր դարուն մեջ, իր բազմահմուտ և խորիմաստ մտքի բացառիկ կարողությամբը։ Աթենացիք զայն կոշած են Դավիթ Անհաղթ փիլիսոփիա, որ վերելակեր է՝ մարդկային իմաստության բարձունքները՝ աստվածային իմաստության աղբյուրնեն սնած և Ս. Հոգիւլիս գորությամբ Քրիստոսի խաչին ինքնաբարրառ երգիչն ու քարոզը եղած է աշխարհի իմաստության մայրաքաղաք Աթենքի մեջ և հայ ժողովրդեն մեծապես սիրված ու հարգված է իրեն նոր Պողոս առաքյալ մը։

Տամաներորդ դարու վախճանին և տասնմեկերորդի սկզբին գրական երկնակամարդին վրա ծագեցավ նոր աստղ մը, որ ստեղծագործեց Վանա ծովու ափերուն վրա։ Գրիգոր Նարեկացի վարդապետն էր այդ, որ իր աղոթքով բացավ երկնից դռները, և որու ճենածերող հոգին Աստուծու սրբության ծարավով կտոշորի, իր միստիկ հոգին կրոցակիզմի երկրնի գոները բախող հզոր աղոթքին աղաղակներով, կյանք և սրբություն կհայցե։ Նարեկացին հրաշք երևույթ է մեր մշակույթի պատմության մեջ և տնի համաշխարհային մեծ նշանակություն։ Հայ ժողովրդի ամենեն շատ սիրած աղոթամատյանն է Նա-

րեկը, որուն գորության վրա ունի մեծ հավատք, և որ ամեն հայ տան մեջ պատվուեղ տնի Ավետարանին հետ միասին։

Օրվան սուրբերուն վերջինն ու պսակն է Ներսես Շնորհալի Հայրապետը։ Ան սոխակն է, քնարը մեր Եկեղեցիին, քաղցրահունչ ինքաղցրանուն։ Իր շարականներով ու երգերով կճոխանան մեր շարականցն ու ժամագիրքը։ Ան կհանդիսանա մեր Եկեղեցիու ուղղափառության պաշտպանը, քրիստոնեական Եկեղեցիներու միության ջատագովով։ Շուր ու շնորհը ունեցող Հայրապետ մը եղած է Ներսես Շնորհալին, և մեր Եկեղեցին զայն թարգմանիչ սուրբերու կարգը անցուցած է իր գրական մեծ վաստակին ու շնորհալի, քաղցր նվազին համար։

Հոգեշնորհ Տ. Ասոլիկ ծայրագուն վարդապետի բանախոսությունը չերմերեն ընդունվեց ուսանողության կողմից։

Հանդեսի վերջում թ լնարանի ուսանող ուրարակիր Եշխան Մելքոնյանը խորունի զգացմունքով արտասանեց Վ. Թեքիյանի Եկեղեցին Հայկական հոյակապ քերթվածը։

Հանդեսը վերջացավ նախագահ սրբազն Հոր եղբակակիր խոսքով, «Պահպանիշօոլ և միարերան երգած Տերունական աղոթքով։

